/ կաղ. ած / ողորմի / ասէք. ի Թվ. ՉԼԵ. խաչի տակը գրված է. «Գրիչ»։

Նույն 1286 թվականին Ամիր Հասանի կինը Թաճեր գրել է տվել մի Նարեկ, սեպհականություն Լիմ անապատի, այժմ գտնվում է Եջմիածնի մատենադարանում և կրում է Ն. Ց. 408 համարը, հասարակ թղթի վերա, արևելյան բոլորգրով։ Բացի գլխավոր հիշատակարանից մի քանի տեղ կան համառոտ հիշատակագրություններ ստացողի և նորա վորդու Էաչիի անվան հիշատակությամբ։

Համեմատաբար ավելի ընդարձակ տեղեկություններ ստանում ենք Ջ-ի վերջում յեղած մեծ հիշատակարանից (Հավել. Բ 20). «ածասեր և բարեպաշ(տ) և արքայուհի պարծանաց» պարոն Թաճերը գրել է տվել այս գիրքը «յերկար կենդանության և բարէխաւս առ տր իւրն և պատուական գլխոյն իւրոյ ածազաւր իշխանաց իշխանին Հասան(այ) որդոյն Պռաւշայ և հարազատ և (պար)ծանաց եղբաւր իւրոյ Պապաքին և գեղ(ուղէշ, եցիկ? և բարե)պաշտ զաւակին Էաչոյ .... ի գաւառիս Վայոց ձոր ի վանս Թատեւոյ*, ձեռամբ Ցովանիսի ախմար և տգէտ գրչի, ի վերայդիտողութեէ Թորգոմեան սեռից տն Ցակոբայ և ի թագաւորութեէ Լևոնի և մերոյս գաւառի հայրապետութեէ տն Սարգսի գիտնական(ի և) հեզի և անարատի պատուիրանաց տն կատարողի»։ Ստացողն ապա կրկին խնդրում է ոգտվողներից հիշել «զամենաւրհնեալ պարոնայքն զԹաճերն և զՀասան .... (յերկու գիր։ և զ) Պապաքն և զԷաչի»։ Գրիչն ապա ավելացնում է, վոր նա կատարել է «զհրաման մարմնաւոր տէր(անց)» գրելով այս գիրքը։ Հիշատակարանի վերջում մեծ տառերով գրված է «Թվկ ՉԼ—», տարաբաղդաբար միավորի միայն կեսը մնացած, ինչպես և Լ-ի պոչը կտրված. միավորը՝ մնացորդից դատելով՝ կարող է ա, ե կամ է լինել, սակայն առաջինը կարելի չէ, վորովհետև 1282 թվին կենդանի եր դեռ ևս Պռոշ մեծ իշխանը, հնարավոր չէ և յերրորդը, վորովհետև մեռած եր արդեն Հակոբ կաթուղիկոսը, այսպիսով հիշատակարանի գրության ժամանակը կարող ենք ճշդիվ նշանակել ՉԼԵ (=1286) թիվը։

Ձեռագիրն սկզբում ունի մի սկզբնազարդ, յերբեմն և լուսանցքի զարդեր, պարզ գույներով, առանց վոսկու գործադրության և արևելյան վոճով։ Ձեռագիրը վատ է պահված, հնարավոր չեր գոնե սկզբնազարդը նկարել, գաղափար տալու գրչի կարողության մասին։

* Ջ-ի մեջ փչացած են փակագծի մեջ առնված մասերը, վոր մենք ենք լրացնում այստեղ։ Թատեւոյ բառը պետք է ուղղել «Թանատի». ստորագծված մասը գրված է բոլորովին նոր թղթի վերա, շատ հետին գրչի և նորոգողի կողմից ավելացրած. Ջ-ի մեջ անաղարտ է մնացած Թ-ի կես մասը և ա։ «Թատեւոյ» վանք վոչ միայն Վայոց ձորում, այլ և Հայաստանում գոյություն չե ունեցել. հետին սրբագրողը հավանորեն Տաթեվ անվան հետ է շփոթել և այդ անվան հետևողությամբ լրացրել կիսատ բառը։ Ջ-ը տեսել և հիշատակարանից ոգտվել է Հովհաննես Բարաղամյանը։

Այս մի և նույն գրչի՝ «սրբասնեալ և պատուական Ցովանէսի ի սբ ուխտէն որ կոչի Թանատի վանս»՝ պետք է լինի նաև Պապաքի անվան հիշատակությամբ 1284 թվի ավետարանը, վորի մասին հիշատակություն յեղավ վերև (եջ. 135 և 137)։

Մարտիրոս գյուղի ամենակարևոր շենքը վիմափոր յեկեղեցիներն են, վորոնց շինողն է այն Մատթեոս վարդապետը, վոր խաչքար է կանգնել նույն գյուղում 1275 թվին Պետրոսի անվան հիշատակությամբ։ Յեկեղեցիները շինված են 1286 թվին, ափսիդի ձախ կողմը՝ պատրհանաձև ավանդատան գլխին յեղած արձանագրության համեմատ, «ի բարէխաւսութի ինձ (Մատթեոս վարդապետի) և Պետրոսի, (նորա հոգևոր հոր) և ծնողաց մերոց եւ պարոնաց մեր», այսինքն Պապաքի, Հասանի, սրա Էաչի վորդու և Հասանի կնոջ Թաճերի, Հակոբ կաթուղիկոսի (Կլայեցի) և գավառի Տ. Սարգիս յեպիսկոպոսի (Նորավանից, վորի հոգևոր տեսչությանն ներքին յենթարկվում նաև Պռոշյանների գյուղերը Վայոց ձորում) ժամանակ։ Արձանագրությունը տեղ տեղ յեղծված է, բայց հնարավոր է լիովին վերականգնել (Հավել. Ա. 23. պատկ. 56)։ Նույն Մատթեոս վրդ-ի ձեռքով 1292 թվին գրված ավետարանի հիշատակարանը տալիս է ավելի մանրամասնություններ թե յեկեղեցիների շինության և թե Ամիր-Հասանի անձի մասին. «բայց գրեցաւ ի գաւառիս, որ կոչի Վայոց ձոր. յանապատիս որ (կո)չի Աղաւ, ընդ հովանեաւ մաւրս յի և սրբոյն Գէորգայ և այլ սրբոցս. ի քահանայպետութեէ (8!) նահանգիս տն Ստեփանոսի (պատմագիր Օրբելեանն է) հեզի և մարդասիրի։ և յիշխանութեէ որդոցն մեծայփառ իշխանաց իշխանին Պռոշոյ՝ Պապաքին և Ամիր-Հասանայ. և ես Մաթէոս վրդ։ հրամանով և ձեռնտվութիւ Ամիր-Հասանա շինեցի զտեղիքս միայնակ վանս. և շինեցի զեկեղեցիքս և զժամատունս»*։ Վիմափոր յեկեղեցին բաղկացած է բուն տաճարից և ժամատնից կամ գավթից. բայց հիշատակարանից պարզ է, վոր սրանից զատ՝ Մատթեոս վարդապետը շինել է և մի ուրիշ յեկեղեցի, հավանորեն գյուղամիջինը, վորն այժմ խպառ նորոգված է և չպետք է շփոթել այն վկայարանի հետ, վոր նույն գյուղում շինել եր Դեղկա վորդի Մխիթարը Պռոշի և Ամիր-Հասանի հրամանով, կանգնելով մի խաչքար (եջ. 45)։

Ներսից գմբեթարդ տաճարն ու ժամատունը փորված են լերան կրծքին. դրսից վոչինչ չի նկատվում, բացի գմբեթի յերդիկից։ Տաճարի ափսիդը բոլորակ է, իսկ մյուս յերեք կողմերը ուղղանկյուն ներքևում, իսկ վերին մասերում կամարաձև, վորոնց վերա բարձրանում է գմբեթը փոքրիկ յերդիկով. տաճարն ունի մի փոքրիկ լուսամուտ ափսիդի հակառակ պատին, դուռը վիմափոր գավթից։ Ափսիդի յերկու կողմից կան փոքրիկ պատրհանաձև ավանդատներ։ Տաճարի յերկարությունն է արևելքից արևմուտք 6,57 մետր ափսիդի հետ միասին, իսկ մինչև ափսիդը 4,55 մ., ափսիդի բացված-

* Ձեռ. Ն. Ց. № 1669. Հավել. Ա. 21։